ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի

4–րդ նիստում

“24” նոյեմբեր 2022 թ.

________________

# ՀԱՏՈՒԿ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

## I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:**

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետն իր առաքելությանն ու ռազմավարական պլանին համապատասխան առաջնային է համարել ստորև ներկայացված ուղղություններով կազմակերպվող աշխատանքները.

- Եվրոպական կրթական և գիտական առաջատար փորձերի ուսումնասիրման համատեքստում ուսումնական գործընթացի կատարելագործում: Ակադեմիական ազնվության ապահովման շրջանակներում ուսումնական պլանների, մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում և համալրում: Google classroom էլեկտրոնային հարթակի կարևորման համատեքստում առցանց ձևաչափով իրականացվող ուսումնական աշխատանքների մշտադիտարկում, որակի ապահովում, կազմակերպվող աշխատանքների կատարելագործում: Միևնույն ժամանակ ուսումնական փաթեթների, առարկայական տրոհումների վերանայում, ուսումնասիրում, նորագույն պահանջներին համապատասխանեցում, ինքնատիպության ապահովում, առարկայի նպատակի և վերջնարդյունքի համաձայնեցում:
- Բակալավր կրթական ծրագրերի /առկա և հեռակա/ և մագիստրոսի կրթական ծրագրերի առցանց և առերես ձևաչափով կազմակերպվող պրակտիկայի բովանդակային բարեփոխումներ, գործընկեր հաստատությունների վերանայում, համալրում: Այդ համատեքստում ֆակուլտետի նիստերին, ինչպես նաև պրակտիկայի վարչության համապատասխան անձանց, պրակտիկայի պատասխանատու ղեկավարների, մեթոդիստների, հոգեբանների, պրակտիկայի համապատասխան հաստատությունների ղեկավարների հետ գործնական առաջարկությունների, գործառույթների շարունակական քննարկումների կազմակերպում:
- Հատուկ և համընդհանուր ներառական կրթության ոլորտում միջազգային գործընկերների, առաջատար բուհերի հետ հարաբերությունների հաստատում, միջազգային կապերի ընդլայնում, միջազգային գիտագործնական միջոցառումների, տարբեր ծրագրերի, վերապատրաստման դասընթացների, սեմինարների, աշխատաժողովների, կլոր—սեղան քննարկումների կազմակերպում, ինչպես նաև մասնակցության ապահովում,
- Ֆակուլտետի համապատասխան ամբիոնների գիտահետազոտական, գիտագործնական աշխատանքների գիտական ուղղվածության ճշգրտում, այդ համատեքստում կազմակերպվող աշխատանքների պլանավորում և կատարելագործում: Հատուկ և ներառական կրթության համատեքստում հետազոտական նոր ուղղությունների, նոր գործընկերների հետ աշխատանքների կարևորում: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, գիտահետազոտական կարողությունների զարգացում, օտար լեզվի իմացության կարևորում և կատարելագործում, օտարալեզու վերապատրաստման դասընթացների մասնակցության խթանում և ապահովում:
- Կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների քննարման և հաստատման, ուսումնական, մանկավարժական, հետազոտական և մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման և անցկացման հարցերի, ամբիոնի հայցորդների ձևակերպման, թեմաների հաստատման, գիտական ղեկավարների նշանակման, ինչպես նաև հայցորդների հաշվետվության քննարկման և ատեստավորման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքների կարևորում և կազմակերպում:
- Ուսումնական աշխատանքների կազմակերպման համատեքստում գնահատման բաղադրիչների, մեթոդների վերանայում, քննարկում, հարմարեցում կրթական արդի պահանջներին և նորագույն մոտեցումներին: Այս համատեքստում իրազեկման, փորձի փոխանակման աշխատանքների կարևորում:
- Ուսանողական և ուսանողական գիտական ընկերության աշխատանքների կարևորում, աջակցում, մասնակցության բաղադրիչի կարևորում, խրախուսում: Համալսարանի ուսանողական գիտական ընկերության հետ մշտապես կապի ապահովում և ֆակուլտետի մասնակցության բաղադրիչի յուրովի ապահովում: Ուսանողների շրջանում օտար լեզվի իմացության կարևորում, միջազգային գիտաուսումնական ծրագրերի մասնակցության խթանում: Բակալավր կրթական ծրագրի և մագիստրոսի կրթական ծրագրի բարձր կուրսի ուսանողների հետ համատեղ տեղային և միջազգային նախագծային աշխատանքների, սեմինարների, գիտաժողովների մասնակցության բաղադրիչի ապահովում: Բակալավր կրթական ծրագրի և մագիստրոսի կրթական ծրագրի բարձր կուրսի ուսանողների և գիտական ղեկավարների հետ համատեղ գիտական հոդվածների պատրաստում և տպագրում:
- Հանրության շրջանում, հանրապետության ավագ դպրոցներում մասնագիտական իրազեկմանն ուղղված աշխատանքների կարևորում, արդյունավետության բարձրացում, այդ համատեքստում համագործակցային միջֆակուլտետային մասնագիտական իրազեկման աշխատանքների նախաձեռնում:
- Ուսանողների շրջանում մասնագիտական կամավորական աշխատանքների կարևորում, խթանում, հանդիպում-քննարկումների կազմակերպում, ուսանողների խրախուսում, պոտենցյալ հնարավորությունների վերհանում:

## II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:

Ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Սիրանուշ Գևորգի Կարապետյան
Ուսումնական գծով դեկանի տեղակալ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Արմենի Կիրակոսյան
Գիտության և միջազգային համագործակցության հարցերի գծով դեկանի տեղակալ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Սերգեյի Մուրադյան
Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչ՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ստեփան Վաղինակի Գրիգորյան
Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թերեզա Յուրիի Ազատյան
Ֆակուլտետի դասախոսների զգալի մասը ծավալում է նաև պրակտիկ գործունեություն հանրապետության կրթական, սոցիալական, բժշկական հաստատություններում, ակտիվորեն մասնակցում է հանրապետական և միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների, կլոր սեղան– քննարկումների և սեմինարների:
Ֆակուլտետում շարունակաբար կազմակերպվում և անցկացվում են մասնագիտական աշխատաժողովներ, վեբինարներ, սեմինարներ, բաց դասեր, վարպետության դասեր, on-line դասախոսություններ, կլոր սեղան-քննարկումներ, ինչպես նաև ուսանողական ինտելեկտուալ խաղ-մրցույթներ, մարզական ու ժամանցային միջոցառումներ, փլեշ մոբեր, կամավորական աշխատանք գործընկեր հաստատություններում, ամառային դպրոցներ, ուսանողների փոխանակման միջազգային ծրագրեր, որոնց ընթացքում իրենց յուրովի ակտիվությունն ու մասնակցային բաղադրիչն են ապահովում ֆակուլտետի թե՛ պրոֆեսորադասախոսական կազմը, թե՛ ուսանողները: Արդյունքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության միջև մշտապես գործում է փոխադարձ կապ և համագործակցություն, ինչպես նաև կառավարչական որոշումների հասանելիության ապահովում ուսանողության շրջանում:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են բուհի առաքելությանը: Մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման, բովանդակային բարելավման ուղղությամբ ֆակուլտետում /այդ թվում յուրաքանչյուր ամբիոններում նույնպես/ ձևավորվել է պատասխանատու աշխատանքային խումբ, որում ընդգրկված են ֆակուլտետի դեկանը, գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալը, երկու ամբիոնների վարիչները և ամբիոնների որակի պատասխանատուները: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը ապահովելու համար ֆակուլտետի համապատասխան ամբիոններում ընտրվել են որակի պատասխանատուներ, ովքեր վերահսկում են էլեկտրոնային հարթակում դասախոսների աշխատանքը և մշտապես տեղեկացնում աշխատակիցներին ամբիոնների կրթության որակի բարելավման, առկա փոփոխությունների անհրաժեշտության մասին՝ օժանդակելով ամբիոններում կրթական որակի չափորոշիչների ներդրման աշխատանքներին: Ֆակուլտետում գործող ՄԿԾ-ները վերանայվել և համապատասխանեցվել են նորագույն պահանջներին, ինչպես նաև մանրամասն նկարագրվել է ակնկալվող ուսումնառության արդյունքները, կրթական ելքային վերջնարդյունքները: Google classroom էլեկտրոնային հարթակում ներկայացվել են դասընթացների առարկայական ուսումնամեթոդական փաթեթները /ԱՈՒՄՓ, առարկայական տրոհումները/: Ֆակուլտետի համապատասխան ամբիոնների նիստերին շարունակաբար անց են կացվել քննարկումներ դասավանդման գործընթացի և ուսումնառության ակնկալվող արդյունքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ՄԿԾ–ների վերանայման, արդի պահանջներին համաձայնեցման ուղղությամբ: Համակարգվել է ամբիոնների ռազմավարական աշխատանքների իրականացման ընթացքը, իրազեկվել է ամբիոնների աշխատողներին կրթության որակի բարելավման և չափանիշների ճշգրիտ ներդրման համակարգը: Քննարկումների ընթացքում մշտապես շեշտադրվել է ուսումնական պլանների համապատասխանեցումը ՈԱՇ-ի կողմից ներկայացված մասնագիտական կրթական չափորոշիչներին, ներլսարանային և արտալսարանային աշխատանքներում տեսական նյութերի և գործնական հմտությունների զուգահեռ զարգացման և փոխլրացման սկզբունքի անհրաժեշտությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տեսական նյութի պարբերաբար արդիականացման գործընթացին՝ կարևորելով ուսումնառության գործընթացում մասնագիտական նորամուծությունների, նոր սկզբունքների, մեթոդների ներդրման անհրաժեշտությանը, ինչպես նաև վերջնարդյունքների համապատասխանեցումը: 2022-2023ուս տարվա բոլոր ԱՈՒՄՓ-ները տեղադրվել են նոր ձևաչափով:

Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու տարում գնահատման մեթոդները քննարկվել են ֆակուլտետի համապատասխան ամբիոններում անցկացված նիստերի ընթացքում: Հետևաբար դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրվում են ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան: Առաջնահերթ է համարվել գնահատման համակարգի ստանդարտացման ապահովումը, ինչը ներառվել և արտացոլվում է առարկայական նկարագրերում, ինչպես նաև պարբերաբար վերահսկվում է ֆակուլտետի դեկանի և ամբիոնների վարիչների կողմից: Կարևորություն է տրվել գնահատման բաղադրիչների համար սահմանված չափանիշների մշակմանը: Գնահատման չափանիշները սահմանված են յուրաքանչյուր առարկայական դասընթացի գործընթացում տրվող գիտելիքների ստուգման ձևին համապատասխան: Առանձնահատուկ շեշտադրվել է այն հանգամանքը, որ հետազոտական և մանկավարժական պրակտիակի վերջնական միավորը կազմում է ամփոփիչ ատեստավորման բաղադրիչներից մեկը: Ուսումնառողների գնահատման գործընթացում կարևորվել է ծրագրավորվածությունը (գնահատումը և վերլուծությունը իրագործվում է որոշակի ծրագրավորված, պլանավորված սկզբունքով), համակարգվածությունը (գնահատումը և վերլուծությունը պետք է համապատասխանեն ուսումնասիրվող նյութի կառուցվածքային բաղադրամասերին և կրեն մշտական բնույթ), օբյեկտիվությունը (գնահատումը և վերլուծությունը պետք է լինեն գիտականորեն հիմնավորված), թափանցիկությունը (ուսանողները պետք իմանան իրենց, նաև համակուրսեցիների գնահատականները, որը որոշակիորեն հանդիսանում է ակտիվության խթան), խնայողականությունը (հանձնարարությունների բովանդակությունը, պահանջվող մեթոդները պետք է համապատասխանեն ուսանողների հնարավորություններին, լինեն մատչելի և հստակ), թեմատիկությունը (ուսումնառողների գիտելիքների որակի գնահատումը անց է կացվում ըստ թեմաների, բաժինների), պահանջների նույնականացումը (անհրաժեշտ է հաշվի առնել կրթության համապետական բովանդակային ստանդարտները, համապատասխանեցնելով դրանք տվյալ մասնագիտության որակավորման համար անհրաժեշտ ստանդարտներին): Ուսումնառողների գնահատման համար կիրառվել են ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ: Ֆակուլտետի կողմից դասավանդվող յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված միջանկյալ ստուգման ձևերը /գրավոր աշխատանք, թեստավորում, թղթապանակ, ռեֆերատ և այլն/, վերանայվել են համալսարանի պահանջներին համապատասխան: Բացի վերոնշյալ միջանկյալ ստուգումներից ֆակուլտետում ամփոփիչ և ընթացիկ ստուգումներն իրականացվել են գրավոր, բանավոր, թեստային ստուգումների, թղթապանակների / ներկայացումների ձևով: Ուսումնառողների գնահատման համար կիրառվել են ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ: Ամփոփիչ ստուգումները, որպես օրենք, ներկայացված են բանավոր ստուգման տեսքով: Ակադեմիական ազնվության ապահովման նպատակով ուսումնառողների գիտելիքների ստուգման գործընթացում կիրառվել են տարբեր մեթոդներ: Գրավոր աշխատանքերի պարագայում պարտադիր է եղել հղումների առկայությունը՝ այլ ակադեմիական աղբյուրներից օգտվելու պարագայում: Թեստային ստուգումների դեպքում՝ ակադեմիական ազնվության պահպանման արդյունավետ մեթոդ հանդիսացել է թեստային հարցաթերթիկներում հարցերի ընտրության պատահականության սկզբունքի կիրառությունը, որը կարելի է ապահովել համապատասխան համակարգչային ծրագրերի միջոցով: Ակադեմիական ազնվության ապահովման համար գրավոր միջանկյալ ստուգումները, գրավոր քննություններն անցկացվում են նախապես կնքված, բուհի կողմից տրամադրված տետրերում, կիրառվում է Google Forms-ով համակարգչային թեստավորման ձևանմուշը:

**Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:**

Ֆակուլտետի դասախոսների և ուսանողների համագործակցությունը, միջազգայնացումը հետազոտական գործունեության ոլորտում հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի գերակա խնդիրն է: Համագործակցության ծրագրերը կրում են ճանաչողական, ուսումնական, մեթոդական, գիտական, ակադեմիական կարողությունների փոխանակման բնույթ: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մշտապես խրախուսվում է փորձի փոխանակումը և զարգացումը ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների շրջանում: Վերը ներկայացրածն իր հերթին հիմնավորվում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների կողմից մի շարք միջազգային և տեղական աշխատաժողովներին, ուսումնագիտական միջազգային ծրագրերին, սեմինարներին, վարպետության դասեր, on-line դասախոսություններին, կլոր սեղան-քննարկումներին մասնակցությունը:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մշտապես խրախուսվում է ուսանողների օտար լեզուների իմացությունը, օտար լեզվով մասնագիտական հաղորդակցման հնարավորությունները, որն էլ իր հերթին նպաստում է միջազգայնացման արդյունավետության բարձրացմանը, մի շարք ուսումնական և գիտական ծրագրերի մասնակցությունը:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական աշխատակազմը և ուսանողները շարունակում են մասնակցել միջազգային տարբեր գիտաժողովների, Erazmus+, Erasmus+ Modest ծրագրի շրջանակներում իրականացվող իրազեկման ամենամսյա ժողովներին, ուսանողների փոխանակման ծրագրերին:

Ամբիոնների նիստերին վերլուծվել և մշտապես քննարկվել է արտաքին կապերի և միջազգայնացման դրվածքը, արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների պլաններն ու ծրագրերը, արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող մեխանիզմները, դրանց արդյունավետությունը:

Հաշվետու տարում հատկապես ակնհայտ է եղել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընդգրկվածությունը հետևյալ ծրագրերին.

– Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան մանկավարժական համալսարանի կողմից կազմակերպված SKLAD առցանց վերապատրաստման դասընթացներին /թվով 4 դասընթաց/,

– Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Չեխիայի Պարդուբիցե համալսարանի և ՀՊՄՀ-ի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի 6 դասախոսի, 3 բակալավր կրթական ծրագրի ուսանողի այցելություն /արդյունքում համատեղ ձեռնարկի մշակում և տպագրում/,
– ԱՄՆ–ի Պեռկինս տեսողության և զարգացման բարդ խանգարումներ ունեցող միջազգային ծրագրի շրջանակներում վերապատրաստումների միջազգային ծրագրերին 12 դասախոսի մասնակցություն/,
– ՌԴ-ի «Со-единение» չտեսնող-չլսողների աջակցության հիմնադրամի կողմից մագիստրոսների թեզերի համատեղ ղեկավարում առցանց սեմինարներին /մագիստրոսական թեզ, ատենախոսական աշխատանքների համատեղ ղեկավարում, այդ համատեքստում մասնակցություն առերես և առցանց համատեղ հանդիպում-քննարկումներին 2 դասախոսի, 1 մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողի, 1 հայցորդի մասնակցություն,
– Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի 1 դասախոսի, բակալավր կրթական ծրագրի 1 ուսանողի այցելություն:

## IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

| | | | |
|---|---|---|---|
| Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները: | | | |
| Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի: | | | |
| Բակալավրի | | առկա | 156 |
| | | հեռակա | 124 |
| Մագիստրոսի | | առկա | 92 |
| Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով | | | |
| Ուսանողների արտահոսք | | | |
| Հաստատություն/երկիր | | թիվ | |
| 1 | Ազատված իր դիմումի համաձայն | 1 առկա բակալավր կրթական ծրագիր<br>1 հեռակա բակալավր կրթական ծրագիր<br>1 մագիստրոսի կրթական ծրագիր | |
| Ուսանողների ներհոսք | | | |
| Հաստատություն/երկիր | | թիվ | |
| 1 | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ | 1 | |
| Հեռացումներ և վերականգնումներ | | տոկոս | թիվ |
| 1 | Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը | | 1 |
| 2 | Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը | | 1 |
| Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:<br><br>Ֆակուլտետի ուսանողների հավաքագրման մեխանիզմներն իրականացվում է ՀՀ կառավարության հաստատած ընդունելության կարգով, ԿԳՄՍ նախարարության հրամանով հաստատված ընդունելության կանոնների համաձայն, ինչպես նաև բուհում սահմանված կարգով: Ֆակուլտետի ուսանողների թվի ցածր լինելը մեծամասամբ պայմանավորված է ՀՀ-ում դիմորդների թվի նվազումով: Այս ուղղությամբ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը շարունակաբար ակտիվ իրականացնում է մասնագիտական իրազեկումներ մայրաքաղաքի և մարզերի միջնակարգ և ավագ դպրոցներում՝ դրանով իսկ էլ ավելի կարևորելով և ամրապնդելով բուհ-դպրոց կապը, համագործակցությունը: Սահմանվել են <<Ֆակուլտետային բաց դռների օրեր>>, որի ընթացքում աշակերտներին ծանոթացնում ենք բուհի, ֆակուլտետի պայմաններին, անցկացվում են բաց դասեր, քննարկումներ, այցելություններ բուհի թանգարան, գրադարան: Դիմորդներին տեղեկատվություն է տրամադրվում բուհի պաշտոնական կայք էջի, <<Հաջողության բանաձև>> հաղորդաշարի, ֆակուլտետի և ամբիոնների Facebook-յան էջերի միջոցով, ինչպես նաև ֆակուլտետի ուսանողական խորհրդի ուսանողների միջոցով: | | | |
| Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:<br><br>Ուսանողներից ոմանք ազատվել են իրենց դիմումի համաձայն, ոմանք ունեցել են վարձավճարի պարտք և ակադեմիական անբավարար առաջադիմություն: | | | |

| | | |
|---|---|---|
| Հաշվետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում: | | |
| Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը: | | |
| Բակալավր | | 14 |
| Մագիստրոս | | 17 |
| Ընդհանուր | | 31 |
| Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը | | |
| | Գիտահետազոտական ծրագիր | ուսանողների թիվ |
| 1 | «Մտագրոհ» ինտելեքտուալ խաղ-մրցույթ «Շիրակացու ճեմարան» միջազգային կրթահամալիրում նվիրված ՀՊՄՀ-ի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառում /հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ, ՀՊՄՀ-ի բոլոր ինը ֆակուլտետներից ուսանողներ, ՀՊՄՀ-ի հենակետային վարժարան, Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան Տեսողության խանգարում ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի աշակերտներ/ /25.02.2022թ./<br><br>https://aspu.am/hy/content/mtagroh_shirakacu_chemaran_mijazgayin_krtahamalirum/#sthash.YxsqVdHJ.dpbs | 67 |
| 2 | IFES հայաստանյան գրասենյակի տնօրեն ժերոմ Լեյրոնի կողմից սեմինար–քննարկում «Մատչելիություն և քաղաքական ներառում» թեմայով /28.03.2022/<br>https://aspu.am/hy/content/mankavarzhakanum_er_zherom_leyrony/#sthash.vJbz2FHQ.dpbs | 52 |
| 3 | «Ներառականությունը վերջնարդյունք չէ, այլ գործընթաց» աշխատաժողով /01.07.2022/<br><br>https://aspu.am/hy/content/nerarakanutyuny_verjnardyunq_che_ayl_gortsyntac/#sthash.rjZROrZW.dpbs | 48 |
| 4 | «Ճախրուկ» միջազգային երաժշտական փառատոն /05.09.2022/<br>https://aspu.am/hy/content/masnakcecin_mijazgayin_paratoni/#sthash.0iNcLUwX.dpbs | 12 |
| 5 | «ԿԱՊԿ ունեցող անձանց սոցիալական հարմարավողականության հիմնախնդիրները» աշխատաժողով /20.10.2022/<br><br>https://aspu.am/hy/content/qnnarkvecin_kapku_socialakan_harmaravoghakanutyan_himnakhndirnery_/#sthash.M3LPhJNX.dpbs | 67 |
| 6 | Մասնագիտական իրազեկման աշխատանքներ հանրության շրջանում, այցելություններ մայրաքաղաքի և մարզերի ավագ և միջնակարգ դպրոցներ | 13 |
| 7 | «Ժպտա և ջերմացրու աշխարհը» հաշմանդամների միջազգային օրվան նվիրված բարեգործական միջոցառում Նոր Նորք վարչական շրջանի թաղապետարանում /03.12.2022/ | 23 |

| Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը | | |
|---|---|---|
| | Տպագրված աշխատանք | ուսանողների թիվ |
| 1 | Обогащение словарного запаса у детей с нарушениями слуха в процессе билингвального обучения – армянского и русского языкам. Научно-теоретический журнал <<Наука и образование сегодня>>N3 (72),май 2022г., г.Москва. | Մալումյան Տաթև<br><br>Մանուկյան Անահիտ /դասախոս/ |
| 2 | Исследование процесса сотрудничества специалист-родитель-ребенок с нарушением слуха в условиях онлайн-обучения. <<Проблемы педагогики>> N3(71), май 2022, г.Москва. | Կիրակոսյան Շողիկ<br><br>Մանուկյան Անահիտ /դասախոս/ |
| 3 | Analysis of parental awareness regarding the role of art therapy in the development of children with complex multiple disabilities. **INTERNATIONAL SCIENCE JOURNAL , Armenian Journal**<br><br>**of Special Education, p.88-95, 2022. DOI: https://doi.org/10.24234/se.v5i1.289 Crossref Google scholar DOAJ World Cat Armenian** | Գաբրիելյան Ամալյա<br>Մուրադյան Սվետլանա /դասախոս/ |
| 4 | Применение мандалотерапии в коррекционно-развитой работе с детьми с нарушением слуха.<br><br>**г. Переяслав-Хмельницкий / Украина, INTERNATIONAL SCIENCE JOURNAL. с.180-184, 2022.**<br><br>**GoogleScholar https://scholar.google.com.ua/citations?user=JP57y1kAAAAJ&hl=uk Бібліометрика української науки http://nbuviap.gov.ua/bpnu/index.php?page_sites=journals Index Copernicus http://journals.indexcopernicus.com/++++,p24785301,3.html** | Բարսեղյան Լիանա<br>Մուրադյան Սվետլանա /դասախոս/ |
| 5 | Խմբային պարապմունքների կիրառման առանձնահատկությունները աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացման լոգոպեդական աշխատանքում:<br><br>Научный журнал «Обществознание и социальная психология» Выпуск №12-3 (43) 2022. Scientific journal «KPO-SCIENCE» Issue №12-2 (43) 2022. | Մելոյան Անուշ<br>Հովյան Գոհար /դասախոս/ |
| 6 | Ընթերցանության ուսուցման արդյունավետ մեթոդների և հնարների ընտրության նպատակները դիսլեքսիայի հաղթահարման գործընթացում: Научный журнал «Обществознание и социальная психология» Выпуск №12-2 (42) 2022. Scientific journal 3 «KPO-SCIENCE» Issue №12-2 (42) 2022. | Շահբազյան Անի<br>Հովյան Գոհար /դասախոս/ |

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության քաղաքականությունը կրթական ծրագրեր, աշխատանքային համապատասխան գործունեություն ծավալելու համար համապատասխան որակավորում ունեցող մասնագետների ընտրությունն է: Նախապես հաստատվել է տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչները, հաստատվել է աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետները: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմն ընդգրկում է հետևյալ տարակարգերը՝ դասախոս, գիտությունների թեկնածուներ, ասիստենտ, դոցենտ, դոկտոր, պրոֆեսոր: Ֆակուլտետի դասախոսների 89,2 %-ն ունի գիտական կոչում և աստիճան:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը բաղկացած է 38 անձից, որից 6-ը՝ համատեղող: Վերոնշյալ ընդհանուր թվակազմից 4-ը պրոֆեսոր է, որից 2-ը մանկավարժական գիտությունների դոկտոր, 20 դոցենտ, 6 գիտությունների թեկնածու, 4 ասիստենտ, իսկ 4-ը դասախոս:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը կազմում է 40-45 տարեկանը: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմն իր որակավորումներով, մասնագիտական պատրաստվածությամբ, գիտական գործունեությամբ և գիտական կոչումներով համապատասխանում է ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի առաջադրված նպատակներին: Միևնույն ժամանակ վստահաբար կարող ենք փաստել, որ ֆակուլտետում դասավանդող մասնագետների հենքային կրթությունը համապատասխանում է դասավանդվող դասընթացների ուղղվածությանը: Դասախոսական կազմը անհրաժեշտության դեպքում համալրվում է նախապես հայտարարված մրցույթով: Ֆակուլտետում գործում է դասախոսների աշխատանքի գնահատման ավանդական մեթոդ՝ դասալսում, որն անցկացվում է <<Ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման կարգի համաձայն>>: Դասախոսները վերապատրաստվում են օտար լեզուների, մասնագիտական և համակարգչային գիտելիքների ուղղությամբ:

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի աշխատակիցների կողմից հաշվետու տարում տպագրվել են գիտական հոդվածներ, հետազոտական աշխատանքներ, կոնֆերանսների նյութերի ժողովածուներում՝ այդ թվում միջազգային գիտական կոնֆերանսների նյութերում: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցել է մասնագիտական և օտար լեզվի վերապատրաստման դասընթացների, գիտական սեմինարների, կլոր սեղան - քննարկումների, աշխատաժողովների: Ֆակուլտետի գիտահետազոտական ուղղությունները տարբեր են և մասնավորապես ներառում են հատուկ հոգեբանության, հատուկ մանկավարժության, ներառական կրթության, հանրընդհանուր ներառականության համատեքստում, զարգացման բարդ և բազմակի խանգարումներ ունեցող անձանց կրթության բնագավառում տարվող հետազոտական աշխատանքներ: Ամբիոնները պլանավորում են հետազոտական աշխատանքները դասախոսների նախասիրություններից ելնելով: Յուրաքանչյուր դասախոս հաշվետվություն է ներկայացնում համապատասխան ամբիոնին հրատարակված գիտական հոդվածների, գիտական աշխատանքների, մի շարք գիտամանկավարժական, գիտահետազոտական միջոցառումների մասնակցության վերաբերյալ: Ներկայացված հաշվետվությունները ամբիոնները ներկայացնում են ֆակուլտետին:

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
|---|---|---|---|
| 1 | БГПУ | РИНЦ | 2 |
| 2 | Актуальные научные исследования в современном мире // Журнал - г. Переяслав-Хмельницкий, Украина | РИНЦ<br>Google Scholar<br>Index Copernicus | 5 |

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

| | Ամսագիրը (երկիրը) | Վարկանիշը | Հրապարակումների թիվ |
|---|---|---|---|

<table>
<tr><td>1</td><td>Scientific journal «KPO-SCIENCE»</td><td>РИНЦ</td><td>2</td></tr>
<tr><td>2<br>2</td><td>OBM Neurobiology USA</td><td>Google Scholar<br>Crossref</td><td>1</td></tr>
<tr><td colspan="4">ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը</td></tr>
<tr><td></td><td>Ամսագիրը</td><td>Վարկանիշը</td><td>Հրապարակումների թիվ</td></tr>
<tr><td>1</td><td>Armenian Journal of Special Education Scientific Methodological Journal</td><td>Google Scholar<br>Crossref<br>DOAJ<br>/Directory of open access journals/</td><td>8</td></tr>
<tr><td>2</td><td>WISDOM</td><td>ISSN<br>1829-3824</td><td>1</td></tr>
<tr><td colspan="4">Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում: (տեքստը այստեղ)</td></tr>
<tr><td colspan="4">Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:</td></tr>
<tr><td colspan="4">Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):<br><br>Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ): Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական աշխատակազմը և ուսանողները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության համատեքստում շարունակում են մասնակցել միջազգային տարբեր գիտաժողովների, Erazmus+, Erasmus+ Modest ծրագրի շրջանակներում իրականացվող իրազեկման ամենամյա ժողովներին, ուսանողների փոխանակման ծրագրերին: Հաշվետու ուսումնական տարում հատկապես կարևորվել է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությունը հետևյալ հետազոտական և ուսումնական աշխատանքներին:</td></tr>
</table>

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

<table>
<tr><td>Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:</td></tr>
<tr><td>Ֆակուլտետի ենթակառուցվածքն իր մեջ ներառում է դեկանատ, լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոն, հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոն, լսարանային ֆոնդ:<br>Պարբերաբար կազմակերպվող քննարկումներն ու զրույցները փաստում և հավաստում են, որ ֆակուլտետի ուսումնական միջավայրից շահակիցների գոհունակության աստիճանը կարելի է գնահատել բավարար: Ֆակուլտետին հատկացված լսարանային ֆոնդի մեծ մասը համալրված է դասախոսությունների արդյունավետ կազմակերպման և անցկացման համար պահանջվող անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Ներկայումս, հաշվի առնելով երկրում տիրող իրավիճակը, համալսարանում, ինչպես նաև ֆակուլտետում ուսումնական գործընթացը կազմակերպվում է առցանց և առերես ձևաչափով Google classroom էլ. հարթակի ակտիվ, լիիրավ կիրառման պայմաններում, որն իր հերթին դժվարություններ չի առաջացնում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների համար:</td></tr>
</table>

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:**

Ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորումն ու ամրապնդումն իրականացվում է ամբիոնների ուսումնական և գիտական տարեկան հաշվետվությունների հիման վրա: Ֆակուլտետի ամբիոնների վարիչները հաշվետվություններ են ներկայացնում օրացուցային տարվա վերջում և ուստարվա վերջում: Հաշվետվությունների հիմքն են հանդիսանում ֆակուլտետի գործող ռազմավարական ծրագրերը, բարեվարքության կանոնները: Ֆակուլտետի հաշվետվությունը տեղադրվում է բուհի պաշտոնական կայքում:
Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ տեղեկատվության, կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերի, նորությունների, հայտարարությունների հասանելիության տեսանկյունից կիրառվում են մի շարք միջոցներ, դրանք են՝
ՀՊՄՀ-ի պաշտոնական կայք էջի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի կայք էջ /տեղադրված նյութերը ներկայացված են նաև օտար լեզուներով՝ ռուսերեն, անգլերեն/
https://aspu.am/hy/page/hatuk_krtutyan_fakultyet/
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ֆեյսբուքյան էջ
https://www.facebook.com/profile.php?id=100018879586957&__tn__=%2CdlC-R-R&eid=ARDhkxKcUEsA-vD1_KM7tav7_SIh0w1VT3yO2M2ryq3OWZfTaPJRHaJbrsEocOtq_VZO77thJn8yWpSK&hc_ref=ARQ__HGSMtDAgT4JTS-nx0zpm7XKbv62Og_q4V-ho2n_OjzwgSBJqRejPfiHOfZW7no
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջ
https://www.facebook.com/profile.php?id=100003147259082
<<Հաջողության բանաձև>> հաղորդաշար https://www.youtube.com/watch?v=-0y4jsUSnc8
ֆակուլտետի մասնագիտությունները լուսաբանող տեղեկատվական բուկլետներ,
Ֆակուլտետի գործունեության մասին պատմող մի շարք հաղորդումներ, միջոցառումներ, տեսանյութեր, որոնք հեռարձակվում են լրատվական տարբեր միջոցներով, այդ թվում նաև մանկավարժական համալսարան պաշտոնական թերթի միջոցով: Ֆակուլտետի կայք էջում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում մշտապես տեղադրվում են տեղեկատվություններ այն բոլոր միջոցառումների, գիտաժողովների, քննարկումների, նախատեսվող վերապատրաստումների, սեմինարների, ինչպես նաև ուսանողական ակտիվ գործունեության մասին, որոնք նախատեսվում և իրականացվում են ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից:
Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը ֆակուլտետի ուսանողների, ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցությամբ հանրության շրջանում իրականացրել է հետևյալ միջոցառումները.խորհրդատվական հանդիպումներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների և ընտանիքների հետ,
վերապատրաստումներ, տեսագործնական դասընթացներ, գիտաժողովներ, խաղ-մրցույթներ, զարգացման տարբեր խանգարումներ ունեցող անձանց միջազգային օրերին միջոցառումների, ժամանցային ծրագրերի կազմակերպում, որի շրջանակներում ֆակուլտետը համագործակցել է տարբեր կառույցների, հատուկ և ներառական ուսուցում իրականացնող դպրոցների, հասարակական կազմակերպությունների, անհատների, հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների հետ:

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

**Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:**

**Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:**

ՌԴ-ի «Со-единение» չտեսնող-չլսողների աջակցության ակադեմիայի կողմից գիտական աշխատանքների /մագիստրոսական թեզ, ատենախոսական աշխատանք/ համատեղ ղեկավարման աշխատանքներին, այդ համատեքստում մասնակցություն առերես և առցանց համատեղ հանդիպում-քննարկումներին /2 դասախոս, 1 մագիստրոսի կրթական ծրագրի ուսանող, 1 հայցորդ/,

- Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան մանկավարժական համալսարանի կողմից կազմակերպված SKLAD առցանց վերապատրաստման դասընթացներին /թվով 4 դասընթաց/,
- Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Չեխիայի Պարտուբիցե համալսարանի և ՀՊՄՀ-ի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի 6 դասախոսի, 3 բակալավր կրթական ծրագրի ուսանողի այցելություն /արդյունքում համատեղ ձեռնարկի մշակում և տպագրում/,
- ԱՄՆ–ի Պեռկինս տեսողության և զարգացման բարդ խանգարումներ ունեցող միջազգային ծրագրի շրջանակներում վերապատրաստումների միջազգային ծրագրերին 12 դասախոսի մասնակցություն/,
- ՌԴ-ի «Со-единение» չտեսնող-չլսողների աջակցության հիմնադրամի կողմից մագիստրոսների թեզերի համատեղ ղեկավարում առցանց սեմինարներին /մագիստրոսական թեզ, ատենախոսական

աշխատանքների համատեղ ղեկավարում, այդ համատեքստում մասնակցություն առերես և առցանց համատեղ հանդիպում-քննարկումներին 2 դասախոսի, 1 մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողի, 1 հայցորդի մասնակցություն,

- Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի 1 դասախոսի, բակալավր կրթական ծրագրի 1 ուսանողի այցելություն:

**Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:**

Ֆակուլտետը մշտապես տեղեկատվական իրազեկող աշխատանք է կատարում առաջարկվող դրամաշնորհային ծրագրերի, հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների վերաբերյալ ֆակուլտետի ուսանողությանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմին: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները մշտապես պատրաստակամ դիմավորում են արտասահմանից ժամանած հյուրերին, զբաղվում նրանց համար առավել հարմարավետ պայմաններ ստեղծելու և սեմինարների, ժամանցի կազմակերպչական հարցերով: Միջազգային գիտական ծրագրերի համակարգման հիմնական նպատակն է.

1. Ընդլայնել և զարգացնել ֆակուլտետի կարողությունները՝ միջազգային հետազոտական ծրագրերի շրջանակներում հետազոտական նորարարական ուղղությունների որոնման և արդիական մեթոդների ներդրման միջոցով:
2. Ակտիվացնել և խթանել ՊԴԱ-ի և ուսանողների օտար լեզվի իմացությունը՝ դրանով իսկ էլ ավելի ակտիվացնելով և նպաստելով միջազգային գիտական ծրագրերում մասնակցության գործառույթը:
3. Ձևավորել և զարգացնել կարողություններ ու հմտություններ միջազգային գիտական մրցունակ ծրագրեր գրելու՝ համապատասխան ուսուցումների, թիմային աշխատանքների միջոցով:
4. Ուսուցանել լսողության խանգարում ունեցող անձանց հաղորդակցման համակարգը, մասնավորապես, ժեստերի լեզու:
5. Համակարգել, հաճախակի ուսումնասիրել գիտական կենտրոնների կողմից ներկայացվող միջազգային հետազոտական ծրագրերը: Օժանդակել լրացուցիչ ֆոնդահայթայթման և միջազգային գործընկերների որոնման գործընթացներին:
6. Ստեղծել և ակտիվացնել գիտական համագործակցության կապեր առաջատար գիտական և տեխնոլոգիական կենտրոնների, ինստիտուտների և համալսարանների հետ:
7. Խթանել ֆակուլտետի ՊԴԱ-ի և ուսանողների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին, սեմինարներին և վերապատրաստման դասընթացներին:
8. Նպաստել ֆակուլտետի ՊԴԱ-ի, ուսանողների և միջազգային գործընկերների հետ համատեղ և առհասարակ բարձր ցիտում ունեցող գիտական պարբերականներում տպագրումների խթանմանը:
9. Առավել հաճախ կազմակերպել տեղային և միջազգային գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ միջազգային գիտական ծրագրերի շրջանակներում:
10. Իրազեկել ՀՊՄՀ-ի և ֆակուլտետի գործունեության մասին միջազգային գործընկերներին՝ դրանով իսկ հնարավորինս ապահովելով օտարերկրյացիների հետաքրքրվածությունն ու հետագայում նաև որպես ուսանող ներգրավումը:

## X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:**

Ֆակուլտետի որակի ապահովման գործառույթներն իրականացվում են ըստ որակի ապահովման ռազմավարական պլանի, համապատասխան ընթացակարգի: Որակի ապահովման համատեքստում, ֆակուլտետի ամբիոններում ընտրվել են որակի պատասխանատու դասախոսներ, ովքեր մշտապես կատարում են մշտադիտարկում, համակարգում են ամբիոնների ռազմավարական աշխատանքների իրականացման ընթացքը, իրազեկում են ամբիոնների աշխատողներին կրթության որակի բարելավման, չափանիշների ճիշտ ներդրմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ, մասնակցում են ինստիտուցիոնալ հավատարմագրմանն ուղղված գործընթացին, ինչպես նաև ներկայացնում են յուրաքանչյուր տարվա ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքները: Մշտադիտարկման արդյունքները մշտապես ներկայացվում և քննարկվում են ամբիոնների, ֆակուլտետների նիստերին:
Ֆակուլտետում պարբերաբար իրականացվում է առցանց և առերես ձևաչափով հանդիպում - քննարկումներ ՀՊՄՀ-ի կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի աշխատակիցների հետ, որի ընթացքում բարձրաձայնվում և քննարկվում են ֆակուլտետի որակի ներքին ապահովմանն առնչվող մի շարք հարցեր:

**Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:**

Ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ապահովելու համար կիրառվում է մի շարք մեխանիզմներ. հաշվետվությունների ներկայացում, ՀՊՄՀ-ի կայք-էջում տեղադրվող տեղեկատվությունը ներքին գործընթացների և կանոնակարգերի վերաբերյալ, ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով պարբերաբար իրականացվող ստուգումներ, որի արդյունքները քննարկվում են ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի հետ,

իրազեկվածության բարձրացման պարբերական հանդիպումներ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների հետ, որի ժամանակ քննարկվում են կատարված աշխատանքները, առկա խնդիրները, դրանց լուծման հնարավոր տարբերակները: Ֆակուլտետի ամբիոնները համագործակցում են համալսարանի որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ: Լուսաբանում են որակի ապահովման հետ կապված ցանկացած խնդիրները: Նման հանդիպումների միջոցով հնարավոր է դառնում ապահովել դասախոսների անհրաժեշտ և համարժեք ակտիվությունը Google classroom էլեկտրոնային հարթակում՝ արդյունավետ դարձնելով հարթակի կիրառությունը ուսումնական գործընթացում: